



Համարը
Տիպը Համաձայնագիր
Սկզբնաղբյուրը ՀՀԱԳՆՊՏ 2004.12.20/3(11)
Ընդունող մարմինը Հայաստանի Հանրապետություն
Ստորագրող մարմինը
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 15.05.1992

Տեսակը Հիմնական
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը
Ընդունման ամսաթիվը 15.05.1992
Ստորագրման ամսաթիվը 15.05.1992
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների զինծառայողների և նրանց ընտանիքների կենսաթոշակային ապահովության և զինծառայողների պետական ապահովագրության կարգի մասին

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունները, այսուհետ՝ մասնակից պետություններ, հիմք ընդունելով 1992 թվականի փետրվարի 14-ի՝ Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների միջև զինծառայողների, զինվորական ծառայությունից զորացրված անձանց և նրանց ընտանիքների անդամների սոցիալական և իրավական երաշխիքների մասին և 1992 թվականի մարտի 13-ի՝ Կենսաթոշակային ապահովության բնագավառում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների քաղաքացիների իրավունքների երաշխիքների մասին Համաձայնագրերը, ցանկություն արտահայտելով համագործակցելու զինծառայողների, զինվորական ծառայությունից զորացրված անձանց և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովության բնագավառում, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հ ո ղ վ ա ծ 1

Համագործակցության մասնակից պետությունների Ձինված ուժերի և այդ պետությունների օրենսդիր մարմինների ստեղծած այլ ռազմական կազմավորումների, Համագործակցության միացյալ զինված ուժերի, ԽՍՀՄ նախկին Ձինված ուժեր և այլ զինված կազմավորումների զինծառայողների կենսաթոշակային ապահովությունը և պետական պարտադիր ապահովագրությունը, ինչպես նաև այդ զինծառայողների ընտանիքների կենսաթոշակային ապահովությունը իրականացվում են այն մասնակից պետությունների օրենսդրությամբ սահմանված կամ սահմանվող պայմաններով, նորմերով և կարգով, որոնց տարածքներում բնակվում են նշված զինծառայողները և նրանց ընտանիքները, իսկ մինչ տվյալ հարցերով այդ պետությունների կողմից օրենսդրական ակտերի ընդունումը՝ նախկին ԽՍՀՄ օրենսդրությամբ սահմանված պայմաններով, նորմերով և կարգով: Ընդ որում, զինծառայողների և նրանց ընտանիքների կենսաթոշակային ապահովության մակարդակը, որը հաստատվում է մասնակից պետությունների օրենսդրություններով՝ համաձայն 1992 թվականի փետրվարի 14-ի՝ Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների միջև զինծառայողների, զինվորական ծառայությունից զորացրված անձանց և նրանց ընտանիքների անդամների սոցիալական և իրավական երաշխիքների մասին Համաձայնագրի, չի կարող ավելի ցածր լինել, քան ԽՍՀՄ օրենսդրությամբ և այլ նորմատիվ ակտերով ավելի վաղ հաստատված մակարդակը:

Հ ո ղ վ ա ծ 2

Զինճառայողների կենսաթոշակների նշանակման տարիների վաստակին հաշվարկվում է սույն Համաձայնագրի 1-ին հոդվածում նշված Զինված ուժերում և այլ զինված կազմավորումներում ծառայությունը (այդ թվում արտոնյալ պայմաններով) Համագործակցության այն մասնակից պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով, որոնց տարածքում զինճառայողները անցել են ծառայությունը:

Զինճառայողներին և նրանց ընտանիքներին թոշակների նշանակման համար դրամական դրույքաչափերը սահմանվում են այն մասնակից պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով, որոնց տարածքներում բնակվում են զինճառայողները և նրանց ընտանիքները:

Հ ո ղ վ ա ծ 3

Զինճառայողների և նրանց ընտանիքների կենսաթոշակային ապահովության և զինճառայողների պարտադիր պետական ապահովագրության վրա կատարվող ծախսերը իրականացվում են մասնակից պետությունների կողմից իրենց բյուջեների հաշվին՝ առանց փոխադարձ հաշվարկների:

Հ ո ղ վ ա ծ 4

Մասնակից պետությունները պարտավորություն են վերցնում տեղեկություն փոխանակել իրենց պետությունում զինճառայողների և նրանց ընտանիքների կենսաթոշակային ապահովության և զինճառայողների պետական պարտադիր ապահովագրության մասին համաձայնեցված օրենսդրական ակտերի հիման վրա ընդունված գործող նորմատիվ փաստաթղթերի մասին, ինչպես նաև իրականացնել մշտական համագործակցություն կենսաթոշակային ապահովության և պետական պարտադիր ապահովագրության հարցերի ժամանակին և ճիշտ լուծման համար կարևորություն ունեցող պարտավորությունները պարզելու համար:

Հ ո ղ վ ա ծ 5

Սույն Համաձայնագրի կիրառման հետ կապված հարցերը, անհրաժեշտության դեպքում, երկկողմ և բազմակողմ հիմունքներով կքննարկվեն մասնակից պետությունների պաշտպանության նախարարների Խորհրդի, ինչպես նաև Համագործակցության մասնակից պետությունների պաշտպանության նախարարությունների (պաշտպանության կոմիտեների) կողմից:

Հ ո ղ վ ա ծ 6

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կատարված է Տաշքենդ քաղաքում 1992 թվականի մայիսի 15-ին, մեկ բնօրինակով, ռուսերեն: Բնօրինակը պահվում է Բելառուսի Հանրապետության կառավարության արխիվներում, որը սույն Համաձայնագիրը ստորագրած պետություններին կողարկի Համաձայնագրի հաստատված պատճենները:

**Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1992 թվականի մայիսի 15-ից:*